

ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Փառք ի բարձունս Աստուծոյ
և յերկիր խաղաղութիւն, ի մար-
դիկ հաճութիւն: Դ. 14.

Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքի մութ խաւար գի-
շերներէից մինն էր. հովիւները իրանց ոչխարները քացօթեայ
մակաղած սկսել էին ննջել եւ անուրջների մէջ ամեն մի
շշուկ, քամու սուլոց սարսուռ էր բերում նրանց վրա.
մութն այն աստիճան սաստիկ էր, որ հագիւ երկու քայլի
վրա կարելի էր անշունչ առարկաները շնչաւորներից զանա-
գանել: Գիշերային մթութեան մէջ մարդիկ աւելի են զգում
իրանց մենակութիւնը, անզօրութիւնն եւ անօգնական լինելը:
Խաւարի, մթութեան մէջ լուսայ ծարաւն աւելի զօրեղ է
լինում, ամուր յնարանի եւ պաշտպանութեան յուսոյ
ցանկութիւնն էլ աւելի զգալի է դառնում: Եւ հրէայ խաշ-
նարածները սիրտը ճմլած, գիշերային խաւարի ծանրու-
թեան տակ անհանգիստ էին. կարծես վայրկեան առ վայր-
կեան սպասում էին ինչ որ արտասովոր դէպքի յայտնու-
թեան:

Եւ այս անթափանց խաւարի միջից էր, որ նոքա երկ-
նային մեղեդիների ձայնից ալթնած, ապշած նայում էին
դէպի վեր եւ անասելի երկիւղով դիտում լուսաւոր ոգի-
ների պարը, որոնք հետզհետէ իջնելով ցած, պարզ լսելի
ձայնով երգում էին «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յեր-
կիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ծննդեան երեկոյի այս խաւարը կարծես խորհրդա-
նշան էր մարդկութեան հոգեկան դրութեան նախքան
Քրիստոսի գալուստը: Ծիշող նոյն մէզն ու խաւարն էր
պատել մարդկանց սրտերին. ծանր, ծնշող էր հոգե-


կան գիշերի խաւարը. ծիշդ է, երբեմն անթափանց խաւարի մէջ փայլփլում էին լուսոյ շիթեր, երեւում էին ուղեցոյց աղօտ ծրագներ (մարգարէները, իմաստունները), բայց դրանք շատ թոյլ էին եւ աննշան, որ կարողանային փարատել մարդկութեան հոգեկան գիշերի խաւարը: Ընդհանուր էր մարդկանց մէջ երկիւղն, անօգնական լինելը, միայնակութիւնը: Ամենքը լարուած սպասողական դրութեան մէջ էին: Ամենքը յոգնած, հիասթափուած, թերահաւատ դէպի իրանց կուռքերն ու պաշտամունքը; սպասում էին երկնային լուսոյ յայտնութեան, Աստուծոյ Առաքեալի գալստեան, որ զար փրկէր ու լուսաւորէր մարդկանց սիրտն ու հոգին:

Մարդոյ Որդու յայտնութեան օրերում հրէա ժողովուրդը քարոյսալէս եւ քաղաքականալէս մի այնպիսի ծանր ժամանակ էր ապրում, երբ ակամայից յիշում էր մարգարէների գուշակութիւնը, երբ նա հաւատում էր, որ հէնց այժմ է ժամանակը Մեսսիայի գալստեան, որ Աստուծոյ ընտրեալ ժողովրդին-հրէաներին ազատի ծանր դրութիւնից եւ վերականգնի Դաւթի խորտակուած թագաւորութիւնը, վրէժխնդիր լինի թշնամիներին:

Հրէա ժողովուրդի այսպիսի սպասողական դրութիւնը սլարգ կացուցանելու համար մենք պէտք է համառօտակի առաջ բերենք պատմական այն երեւոյթները, որոնք հրէաստանը դրել էին բացառիկ պայմանների մէջ:

Հրէա ժողովուրդը Եգիպտոսի եւ Պաղեստինի քաղմութիւ նիւթական ու պատկերաւոր աստուածները չաւառեց, այլ նա գտաւ իսկական Աստծուն, իր միակ Եհովային, որ նմանը չունի, ոգեշունչ է եւ անմարմին: Եւ որովհետեւ այդ հաւատքը կղզիացրել էր նրան միւս ժողովուրդներից, ուստի եւ իր ճանաչած Աստուածը դարձաւ իւր սեպհականը, իսկ Իսրայէլը—իւր Աստուծոյ ժողովուրդը:

Աստուծոյ եւ Իսրայէլացւոց մէջ դաշն կապուեցաւ. ժողովուրդը յանձն առաւ կատարել Նրա քոլոր կարգադրութիւնների եւ պաշտամունքի մանրամասները, իսկ Աստուած խոստացաւ իւր ժողովրդին իւր ամենագոր հովանա-



տրութիւնը ուրիշ ազգերի դէմ՝ կռուի միջոցներին մինչեւ այն ժամանակ, քանի ժողովուրդը հաւատարիմ՝ կրինի իր Աստծուն։ Սակայն Իսրայէլի եւ նրա Աստուծոյ-Եհովայի մէջ տեղի էին ունենում տաքսածայնութիւններ։ Հրէա ժողովուրդը հետզհետէ կորցնելով Աստուծոյ պատգամների ոգին, ըմբռնելու շնորհքը, չթափանցելով միաստուածեան կրօնի էական պահանջները, կամենում էր զոհացումն տալ նրան միայն արտաքին ձեւապաշտութեամբ եւ կռապաշտական ժամանակներից մնացած զոհաբերութեամբ, մինչդեռ աստուածային ներշնչմամբ հրապարակ ելած մարգարէները Աստծուն ծառայելը չէին հասկանում միայն զոհաբերութիւնն ու ծէսերը, այլ սրտի մաքրութիւնն եւ կեանքի անապականութիւնն։ Եւ այդ պատճառով Եհովան ասում է Ամոս մարգարէի ընթանով. «Ես ասում եւ զգում եմ՝ ձեր տօն օրերից, ես պէտք չունեմ ոչ ձեր զոհերին եւ ոչ ողջակէզներին, ես չեմ կարող լսել ձեր սրնգի նուագածութիւնը, քայց թող դատաստանը հոսի ինչպէս ջուր եւ արդարութիւնը՝ իրրեւ անապառ աղբիւր», «Որովհետեւ, ասում է Ովսիա մարգարէի ընթանով, ես սիրում եմ բարեպաշտութիւնն աւելի՝ քան զոհը, եւ Աստուած-գիտութիւնն աւելի՝ քան ողջակէզը»։

Հրէա ժողովրդի ծիսապաշտութիւնն այն աստիճան կլանել էր նրանց ժողովրդ սուսերինութիւնները, որ Միքիա մարգարէն բացականչում է, «Ինչո՞ւ ես պիտի ներկայանամ Եհովայի առաջ եւ ի՞նչ պիտի սփռեմ Ամենաբարձրեալ Աստուծոյ առաջ։ Արդեօք պիտի ներկայանում նրան ողջակէզներով, տաքեկան հորթերով. մի՞թէ Եհովան զոհ կմնայ հազարաւոր ոչխարներով եւ թիւրաւոր գէր նոխազներով։ Ով մարդ, նա ցոյց է տուել քեզ թէ ո՞րն է բարին, թէ նա ի՞նչ է պահանջում քեզանից—Նա պահանջում է արդարութեան գործ, բարեպաշտական սէր եւ հնազանդութիւն ձեր Աստծուն»։

Իսկ Երեմիայի ընթանով ասում է. «Ես ոչինչ չեմ ասել ձեր հայրերին, ես ոչինչ չեմ հրամայել նրանց այն օրը, երբ դուք էի հանում Եզրպառոսից, ոչ ողջակէզների

մասին եւ ոչ զորարերութեանց: Բայց անա Ես ինչ հրամայեցի նրանց. լսեցէք իմ խօսքը եւ Ես կը լինեմ ձեր Աստուածը»:

Այս բոլոր առաջ ըերած վկայութիւններից, որոնք ասուել են Քրիստոսի յայտնութիւնից շատ դար առաջ, գալիս են հաստատելու հրէա ժողովրդի կրօնական արտաքին ծիսապաշտութիւնն առանց ներքին բովանդակութեան: Բայց երբ լռում է մարգարէների սթափեցուցիչ կոչը, երբ դադարում են Եհովայի ծշմարիտ քարոզութեան ձայնը լսուել հրէից տաճարներում եւ հրապարակներում, նոքա էլ աւելի խորասուզուելով ծիսական արարողութեանց մէջ, անձնատուր են լինում աստուածապաշտութեան արտաքին ձեւականութեան, որով ստեղծում է հոգեկան դատարկութիւն, ուր բուն են դնում մարդկային կրքերն եւ աշխարհային ձգտումներն:

Հրէաստանի քաղաքական պայմաններն էլ աւելի վատթար էին:

Համարելով իրան Եհովայի ընտրեալ ժողովուրդ, միշտ առանձին վերանծնութեամբ եւ արհամարհանքով է նա վերաբերուել դէպի իր դրացի ազգերը եւ սկզբներում իր տարած յաղթութիւններով զոռոգացած, չէր կարողանում տանել այն ընկճուած դրութիւնը, որի մէջ գտնուում էր մանաւանդ քաղաքական գերութեան ժամանակում: Հրէա ժողովուրդը միշտ լարուած դրութեան մէջ էր եւ այդ է պատճառը, որ երկար ժամանակ իրանց ազգային ոգին վառ պահողները զրում էին տենդային եռանդով. երբէք մարդ այնպէս յուսահատական եւ ծայրայեղ անձնագործութեամբ չի կոռուել իւր ապագայի նւ իւր ճակատագրի առեղծուածի համար, որքան հրէա ժողովուրդը:

Դարերի ընթացքում հրէա ժողովրդին հաւածում էր մի վիթխարի ցնորք — լինել համաշխարհային եւ բոլոր ազգերից քարձր — եւ անդադար այս ցնորքը վերանորոգում էր նրա կենսունակութիւնը: Հրէաստանը հեռու օտարերկրեայ քաղաքակրթութիւնից, ազգային ապագայի մէջ էր կենդրոնացրել իր սիրոյ եւ ցանկութիւնների ամբողջ ուժը: Նա

հաւատում էր, որ աստուածային խոստումն ունի իր յաւիտենական գոյութեան համար, քայց որովհետեւ դառն իրականութիւնը Գ-ը դարից սկսած մինչեւ Բրիտանի յայտնութիւնը այլ հետեւանք էր ցոյց տալիս — աշխարհիս վրա իշխում էր միայն կռաւիտ ուժը, որի տակ այնքան չարաչար տուժում էր հրէա ժողովուրդը եւ խորտակւում նրա ձգտումները, ուստի նա ծիգ էր թափում անիրազործելի գաղափարներ իրազործել, նա երազում էր վերականգնել Դաւթի տունը, աստուածապետութեան եւ Եհովայի պաշտամունքի յաղթանակը տանել հեթանոսական պաշտամունքի վրա: Եւ Կիւրոսի յաղթութիւնն քաքելացւոց վրա ու հրէից ազատութիւնը մի վայրկեան եկան կրկին յուսադրելու նրանց, որ յիրաւի ասպազան իրանց է պատկանում: Սակայն այս ցնծութեան օրերը երկար չեն տեւում եւ արեւելքից հագիւ խաղաղած, արեւմուտքից են գալիս հարուածները: Հռովմէական Տետրարխներն ու Էտնարխներն են իշխում հրէաստանին: Հռովմէական տիրապետութեան ժամանակ նոքա կորցրին իրանց անկախութիւնը, մնացել էր միայն քահանայապետութիւնը, որ իբր պիտի ազգային-կրօնական սովորութիւններով ու օրէնքներով կառավարէր երկիրը, քայց այս էլ անունով էր մնացել միայն: Հռովմէական քաղաքակրթութիւնը իր ազդեցութիւնն է թողնում հրէից վրա. եւ ահա այդ ժամանակ դուրս են գալիս մոլեռանդ խռովարարներ, զիջօտներ կամ սիկարեաններ, որոնք մահով սպառնում էին նրանց, որոնք Օրէնքը (Մովսիսադիր պատգամները) խախտում էին:

Հռովմէական տիրապետութեան ժամանակ դրուած ըլլոր պարտաւորութիւններից ամենաանդուրը հրէա ժողովրդի համար էր աշխարհագիր առնելը: Դեռ Դաւթի թագաւորութեան ժամանակ աշխարհագիր առնելը մարգարէների կողմից զօրեղ տրտունջների եւ սպառնալիքների էր հանդիպում եւ իրօք, աշխարհագիրը հարկահանութեան հիմքն էր կազմում, իսկ հարկը, աստուածապետութեան տեսակէտից միանգամայն պիղծ էր համարւում: Ասորոց

Կիւրենայ դատաւորի հրամանով հրէաստանի մէջ առաջին աշխարհագիրն էր լինելու, ուստի եւ Հրէից մէջ մեծ իրարանցումն էր առաջ քերել եւ Յուդա Գամաղացին եւ փարիսեցի Սադոկ հերքելով հարկատուութեան օրինակաւորութիւնը զրգռում էին ժողովրդին ապստամբել: Եղան խռովութեան դէպքեր, քայց ինչպէս միշտ, նոյնպէս Իւսյս անգամ հռովմայեցիք ճնշեցին ապստամբութիւնը:

Հրէա ժողովուրդը մի կողմից յոյսը չկորցրած, միւս կողմից առանց Երովայի օգնութեան անկարող լինելով մարտել հռովմէական լէգէօնների դէմ, հասած էր համարում վերջապէս ժամանակը, երբ Աստուած պիտի ուղարկէր խոստացուած Մեսսիան: Երբա քրքրում էին մարգարէութիւնները, ամեն մի իրանց ժամանակի համապատասխան պատմուածք կամ մարգարէութիւն ազահութեամբ իւրացնում եւ տարածում էին ժողովրդի միջ եւ համոզում, թէ մօտ է Աստուծոյ Առաքեալի գալստեան ժամանակը: Հրէաստանի օղը էլէքտրացած էր, դրութիւնը սպասողական եւ այն աստիճան տարածուած էր Մեսսիայի գալստեան գաղափարը, որ խաշնարած հովիւներն անգամ խմբուած ժամանակ միայն այդ նիւթի մասին էին խօսում: Եւ ահա, թերեւս այդպիսի գիշերային զրոյցից յետոյ էր, դեռ նոր հովիւները ննջել էին սկսել, երբ խաւարի մէջ նշմարում են լուսաւոր դէմքեր, որոնք երգում էին «Փառք իրարձունս Աստուծոյ»:

Երկնային հրեշտակները աւետելով հովիւներին Բրիտոսի ծնունդը, աւետում էին նա եւ երկրիս վրա խաղաղութեան սկզբնաւորութիւնը: Եւ իրօք Բեթղեհէմի նորածինը իր քարոզութեան ամբողջ ընթացքում սիրոյ, խաղաղութեան, եղբայրութեան գաղափարն էր սերմանում, Նա — Աստուծոյ Որդին — յայտնուեց աշխարհիս վրա, մարդացաւ, ապրեց մարդկանց մէջ եւ Բեթղեհէմում երեւցած փայլուն աստղը պայծառ լոյս սփռեց խաւար երկնական մարի վրա, գիշերային մթութեան մէջ: Երա վարդապետութիւնը մոլորուած եւ ճշմարիտ ճանապարհից շեղուած, զիտութեան, ճշմարտութեան լոյսից զուրկ մարդկութեան

համար լուսոյ պայծառ ճառագայթներ սփռեց։ Բրիտոսի ծննդեամբ սկսուեց վերանորոգող աւետարանական հաւատը, որ եղաւ հիմք պայծառ անյողողոյ յուսոյ։

Բրիտոսի Եպիսկոպոսութիւնը մի նոր դարաշրջան քացեց մարդկութեան մտաւոր-քարոյական կեանքում, նրա քարոզութիւնները ներշնչուած սիրոյ, հաւասարութեան սկզբունքներով նոր մղումս տուեցին հասարակական կենցաղավարութեան դէպի քարին, դէպի ազնիւն ու գեղեցիկը։

Բրիտոսի վարդապետութիւնը քարոզուելով մարդկանց կեանքում առաջացրեց այն բոլոր գործօնները, որոնք դնում են մարդկութեան քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրա. այդ քարոզութեանն ենք պարտական, որ ստրկութիւնը վերացաւ, որ խորտակուեցին բռնակալի շրջութաները, որ գրուեցաւ ազգերի զէխին ծածանող դրօշակների վրա «Եղբայրութիւն, հաւասարութիւն, Ազատութիւն» խօսքերը։ Եւ չկայ մեր քարոյական աշխարհում մի դէպք մի երեւոյթ, որ չնախատեսուած լինի ու ամենքին մատչելի պարզ լեզուով ասուած չլինի Բրիտոսի աւետարանի մէջ։

Մակայն դարերի ընթացքում մարդկութիւնը տարուած աշխարհային հոգսերով, դարձաւ նիւթսպաշտ, նա այն աստիճան անճնատուր եղաւ երկրային քարիքներով շրջապատուելու հոգսին, որ պահ մի մոռացաւ քարոյական է՛ն ամենէն վսեմ սկզբունքները։ Նա գոռոգացած գիտութեան տուած պտուղներով, կարծես մոռանալ սկսեց այն քարոյական վարդապետութիւնը, որ «ամենեքեան դուք եղբարք էք» սկզբունքն էր դաւանում։ Նա իրական ուսմունքով ուռճացած ուրացաւ այն Աստծուն, որին պաշտում էին իր նախորդները, նա զոհ չմնաց այն քարոյական քարոզներով, որոնք չէին համապատասխանում իր աշխարհային կեանքին, չէին չափում իր առօրեայ քայլերով։ Նա, մարդկութեան գիտակից մասը, մի վայրկեան հերքելով բոլոր վերացական էակների պաշտամունքը, առանց պաշտամունքի, առանց Աստծու մնաց։ Բայց անկարող լինելով ապրել առանց Աստծու, առանց իդէալի, սկսեց փնտռել

Աստծուն զանազան տեղերում՝ եւ մարդկութեան աւելի կրթուած, զարգացած մասը միշտ դժգոհ արդէն ձեռք բերածից, միշտ ստեղծում է նորանոր աստուածներ եւ հասնում ֆետեշիզմին-կռապաշտ է դառնում:

Բայց քիչ չեն այլ մարդկանց շրջանում եւ այնպիսիները, որոնք հերքելով Աստծու գոյութիւնը, դարձել են անձնապաշտ, երկրպագում են իրանց Եսին, ընդունելով այն սկզբունքը թէ «Եթէ Աստուած չկայ, ապա ես եմ Աստուածը»: Բայց երբ մարդ միանգամ ընդունեց ինքնաստուածութեան գաղափարը, այն ժամանակ դժուար չի լինիլ մականքերել այն չարիքները, որ պիտի տռաջանային այդպիսի ճգնումից: Եւ իրօք, սոսկալի են իր անձը աստուածացնող մարդու անորակելի ազատութեան հետեւանքները. այդպիսի համար ամեն ինչ թոյլատրելի է, նրա համար չկայ ոչ շափ եւ ոչ սահման եւ մենք ոչ միայն տեսականապէս, այլ իրական կեանքում տեսնում ենք դրա սոսկալի հետեւանքները, դա տանում է մարդկանց դէպի ոչնչականութիւնն եւ անիշխանականութիւնը: Մեծ ինքնաբաւականութեամբ ոմանք իրանց անուանում են անիշխանականներ եւ ազատ գրաւով ամեն տեսակ կաշկանդումներից ու սկզբունքներից, դաւանանքի եւ քարոյականութեան ժխտումը դառնում է մոդայական ռարոզութեան նիւթ եւ կեանքի եզակի սկզբունք յայտարարում է կատարեալ քացառումն սկզբունքների: Մարդը չի կարող տռանց որ եւ է պաշտամունքի տարել, նա պիտի ունենայ իր պաշտելի առարկան. եթէ չունի կենդանի Զատուածը, ապա ստեղծում է իր համար կուռքեր եւ ծունկ խոնարհում նրանց առաջ, խունկ ծխում նրանց պատուանդանին,

Սակայն մի՞թէ յիշուի իր ձեռագործ աստուածները կարող են գոհացումն տալ մարդուն, մի՞թէ կարող է հարստութեան, կեքերի, փառասիրութեան, նոյն իսկ հերոսութեան եւ համեմատաբար աւելի ազնիւ եւ վեհ պաշտամունքները ըստականութիւն տալ մեզ, երբ զիտենք, որ դրանք մեր ստեղծածներն են եւ վաղանցուկ ո՛չ երբէք:

Միայն խոնարհուելով կենդանի Աստծու առաջ, որ քարութեան մարմնացումն է, մենք կարող ենք արդարացնել եւ անյողողող ամրապնդել մարդկանց սրտերում՝ բարւոյ եւ գեղեցկի գաղափարը, ընդունելով եւմեր վերաբերութեամբ պարտքի եւ ճշմարտութեան պարտաւորիչ լինելը:

Բայց Աստծուն կարելի է մերձենալ Բրիտոսսով, մարմնացած Աստծու Որդու միջոցաւ: Աստուածորդու մարդանալն եւ մեր մէջ ապրիլն իբրեւ մարդ կատարեալ, մի գեղեցիկ գաղափար է, որ ոչ իբրեւ երեւակայութիւն, այլ իբրեւ իրականութիւն գոյութիւն ունենալով, մեր մէջ յոյս պիտի ծնեցնի, որ մեզանից իւրաքանչիւրը կարող է Աստծու որդի լինել, որի համար միակ ճանապարհը Մարդոյ Որդու աւետարանի քարոզութիւնների ճիշդ գործադրութիւնն է կեանքի մէջ:

Երբ մարդկութիւնը այս ուղիղ ճանապարհը կգտնի եւ անշեղ առաջ կընթանայ, այն ժամանակ կարող կլինի իր օրհներգը վերառաքել առ Ամենաբարձրեալը գուարթունների հետ կրկնելով «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Մի հին Լատինական առած ասում է, Repetecio est mater studio, այսինքն կրկնութիւնն է ուսման մայրը, կրկնութիւնն է մի գործի հաստատուն եւ յարատեւ լինելու ոյժը: Ինչպէս որ պակասաւոր, բացասական բանի կրկնութիւնը տանում է դէպի անկում եւ կորուստ, այնպէս էլ դրական, լաւ բանի կրկնութիւնը տանում է դէպի կատարելութիւն, ոյժերի զարգացում եւ զօրութիւն: Մեծ բանաստեղծ եւ իմաստասէր Վեօթէն ասել է. լաւ բաները, մտքերը կարեւոր է միշտ կրկնել: Վարդապետութիւնը, հմուտ արուեստադիտութիւնը վարժութիւնից է, իսկ վարժութիւնն է յաճախակի կրկնութեան հետեանք: Հին մանկավարժների մեթոդիկայի՝ դասատուութեան եղանակի